... յի յուրազրի հետ որինակ - նա կրոնը կամ յեկեղծեցին հարյուր տոկոսով
... յի յիստում յեվ յերկրորդ հիմնական պակասությունն այն է, վոր Փափապյանը
... յերջի վերջո շատ խոշոր տեղ է տալիս անհատականությանը յեվ նրա մոտ առ-
... հասարակ հերոսը դառնում է պատմական շարժիչ ուժ, ի հարկե սա միակող-
... մանի կերպով հերոսին որդաւել է նշանակում յեվ նա դառնում է իրոք
... ինդուստրիալիստ:

Անձը շեք յիստում անհատի դերը պատմության մեջ, բայց յեվ
... նրան շեք դարձնում գեոյորդ, այսինքն պատմությունը կերտող, դարբնող,
... ինչպես այդ անուր է Վ. Փափապյանը «Ասիի» մէջ:

Այժմ անցնենք կոնկրետ փաստերին: Առաջին վեպի - «Ալեմզիր»-ի
... ճյուղը առնված է պարսկական կյանքից. վեպն ընդգրկում է նասրեդուին
... Ծահր քաղաքական գործունեության վորոշ շրջանը, հատկապես 1891
... թվականը: Վեպի հիմնական բովանդակությունը հետեւյալն է - Պարսկական
... կառավարությունը ճիսխոտի մեծապաճառը ձախում է անգլիական մի
... ընկերության յեվ անգլիացիների այս շահագործման դեմ, ձառնում է
... պարսկական ժողովուրդը հոգեվորականության գրգումով յեվ վերջի վերջո
... կառավարությունն ստիպված է լինում Անգլիացիների ձեռքից այս մե-
... նավաճառը խլել: 3 երբ վոր կառավարությունը այս պիղումն անում է,
... Փափապյանը սա համարում է ժողովրդի հաղթանակը յեվ որվածքի
... վերջում ասում է թե «Ալեմզիր»-ն ինքն ժողովուրդն է, Վեպի մեջ հիմ-
... նական գործողության շղթան առաջ է տանում մի կողմից ժողովուրդը,
... ապեւի ճիշտ նրա մի խավը «Խեղ-Փուղներ»-ը յեվ մյուս կողմից գլխավոր
... հերոսներ - Աեյիդ, Հաբիբուլլահը յեվ Միրզա Ռիզա Աեյիդը:

Առաջին անգամ խեղփուղներին վտարի յե կանգնեցնում Աեյիդ
... Հաբիբ Ռիզան, նա գիշերով գնում է խեղփուղների հավաքատեղին յեվ
... նրանց գազող մի ճառ է ասում, չ սույն տակով կառավարության հա-

կառուցողական գործողությունը, այս ճառը ճշդով տպավորություն է թողնում խեղճների վրա, նկատի առնելով նախկին այն հանգամանքը, վոր խեղճների հավաքատեղիում զանվում է մի պատանու դիակ, վորը խաների սեռական սանձարձակության արդյունքն էր: Խեղճներն այս դիակ համարում են մի միջոց իրենց վրա բարդելու հանձնագործությունը:

Սեյրդ Հաբիբ Ռուլանն իր ճառի մեջ նկատի առնելով այս հանգամանքը՝ խեղճներին միանգամայն զայրութով է լցնում. արդյունքն այն է լինում, վոր խեղճները հարձակվում են խանի զանձապահի տան վրա ավերածություն անում յեղ այս ճեղով իրենց վրեժի զգացմունքը հագեցնում:

Մինչդեռ Սեյրդ Հաբիբ Ռուլանն ուզում էր գնալ Թեհրան, զապառուցործում է Միրզա Ռիզա Սեյիդը: Սա վրոքի յե կանգնեցնում զապառախ ժողովրդին, յերբ զապառում նրան ձերբակալում են յեղ ուզում են Թեհրան բերել, ճանապարհին Սեյրդ Հաբիբ Ռուլանն ուզում է ապատել նրան, բայց սա նրան չի հաջողվում, վորովհետեղ վորքը կրակում է խեղճների վրա յեղ նրանք փախչում են:

Յերրորդ գործը վոր կատարում է Սեյրդ Հաբիբ Ռուլանը, սա այն է, վոր նա մասնակցում է կառավարական մի կարեկոր ժողովի, վորտեղ քննվում է Անգլիացիներին հաստուցած առևտր խնդիրը, վորովհետեղ Անգլիացիներից մենավաճառը վերցրել էյին, նրանք հաստուցում էյին պահանջում: Այստեղ այս ժողովում Սեյրդ Հաբիբ Ռուլանը մի կատարի ճառ է ասում կառավարության դեմ յեղ ցույց տալիս կառավարության հակաժողովրդական գործը յեղ այս ժողովը վերջանում է առանց վորեղե արդյունքի: Սեյրդ Հաբիբ Ռուլանի վերջին գործն այն է լինում, վոր նա կազմակերպում է Միրզա Ռիզա Սեյիդին բանտից ապատելու գործը: Բանտի վրա մի հարձակում է գործում յեղ այս ճեղով նրան ապատում: Այս վերջինին ապատելու մոմենտը Քափազյանը տալիս է լավատեսական մի հայացքով յեղ ասում է, վոր «Ալեմգիր»-ն ամեն կերպ իր ժողովրդի կամքն է ուզում կատարել:

ինչ հասարակական յեզ գեղարվեստական արժեք ունի վեպը. ամենից առաջ հասարակական արժեքն այն է, վոր մեր գրականության մեջ սա առաջին գրվածքն է, վորի մեջ վարկաբեկվում է մտերկուցումը և Անգլիական իմպերիալիզմը յեզ նրա գաղութային քաղաքականությունը, բե ինչպես խարդախ միջոցներով, ինչպես մուգ հավելիական գործողություններով իրենց նվաճողական քաղաքականությունն են առաջ տանում Անգլիացիները:

Արնչդեռ հայ բուրժուական մամուլը «Մշակ»-ը յեզ «Մուրճ» շարունակ Անգլիական իմպերիալիզմը գովաբանում էին, Փափազյանն իր վեպի մեջ ժողովրդի շահերի տեսանկյունով նույն այս իմպերիալիզմը ցույց է տալիս, վորպես ժողովրդի թշնամի յեզ բուրժուական պարմանակն չէ. վոր հայ կիճոն ոգտագործել է Փափազյանի այս վեպը «Խաչուրներ» կիճոն նկարի համար:

Չեսո հասարակական տեսակետից նշանավոր է այս վեպը նայել նրանով, վոր Փափազյանն առհասարակ միապետությունը յեզ պարսկական շահին առանձնապես հանդես է բերել բացասական գծերով:

Կասկածից դուրս է, վոր Փափազյանի վեպը պարսկական միապետությունը նկատի պանելով, նկատի յե առել նայել պարսկան իշխանությունը, յեզ ցույց է տվել յերկուսի հակամոտորդական լինելը:

Վերջապես շատ կարեւոր է նայել հեղինակի հայացքն այն մասին, վոր իսկապես «Ալեմգիր»-ը ինքը ժողովուրդն է:

Այստեղ յերեկում է Փափազյանի դեմոկրատական հայացքը, վոր միայն շահի, այլեւ պարսկական բյուրոկրատների վերաբերյալ «Ալեմգիր» վեպում բազմաթիվ մերկացումներ կան. բոլորն էլ կաշառակեր են, ժողովրդի թշնամիներ յեզ ոտաք պետության պաշտպան, տվյալ դեպքում Անգլիացիների գործիքը: Գրվածքի հասարակական տեսակետով պակասավոր կողմն այն է, վոր պարսից հոգեվորականությունը դրական գունավորումով է ցույց տալիս հեղինակը: Վիպասանը հակադրելով հո-

գեղարվեստական միասնության գեղ, շատ խոշոր քաղաքական սխալ է կատարում, վորոպ հետեւ հոգեվորականութունն ունի ապրելիկ գծի Պարսկաստանում յեղ նա մնում է միասնության հիմքը յեղ ժողովրդին խաբէլու միջոցներով մեկը:

Գալով վեպի գեղարվեստական արժեքի խնդրին, պետք է նկատել վոր յերկրի հասարակական - քաղաքական թերութուններով պայմանավորված է նախեւ դրա գեղարվեստական թերութունները որինակ հեղինակին չի հաջողուել կենդանացնել իր Սեյիդներին: Այս պարսկական հոգեվորականները նրա մոտ մնում են խոսողներ յեղ կրկնում են հեղինակի համոզմունքները, վորը շատ տեղերում սալական չի խոսողների կենցաղին. յեղ աշխարհայայբին: Վեպի մեջ համեմատաբար հաջող է տվել խաչփուշների կյանքի նկարագիրը: Խեչփուշները Պարսկաստանում լյու մպեն պրոչեւարների, ընչապարկների խաւն է: Փափազյանը խեչփուշների կենցաղը նկարագրում է միանգամայն կենդանի, ունախտական յեղանակով: Թեյեղ պետք է ասենք, վոր վեպի մեջ խեչփուշների այս ակտիվացումը յեղ նրանց քաղաքական գործի մեջ առաջավոր տեղ տալը, վորը շատ չափով իր մեջ պարունակում է վոչ իրական տվյալներ, վորովհետեւ համոզիչ չէ, վոր այս քայքայված հասարակական խաւը կարողանա իր վրա հետեւողականորեն տանել այս խոշոր քաղաքական գործը և պարմանալի չէ, վոր ինքը Փափազյանը հակասութունների մեջ է ընկնում. վեպի մեջ մի տեղ նա իրենալականացնում է խեչփուշներին, իսկ մյուս տեղը ցույց է տալիս, վոր նրանք վերջի վերջո քայքայված մի խաւ լինելով՝ իրենց բարոյական աշխարհայայբն էլ այս քայքայված դրության վորոշ բացասական գծերը կրում են:

Փափազյանի մոտ գեղարվեստորեն շատ ակելի հաջող է տրված կենցաղը, իրական կյանքի մանրունքների նկարագիրը, առորինական վորոշ դիտողութուններ - որինակ՝ հատկապես պարսկա-

Կան շուկայի նկարագրերը մեր գրականության մեջ լակագոյն նկարագրու-
թյուններով մեկն է: ԴՈՐ շատ արժեքավոր մ. նկարագրութունն է:

Այստեղ յերեւում է Փափազյանի տաղանդի ամբողջ ուժը,
ինչ նա տեսել է, գիտել է, ուսումնասիրել է յերկար տարիների
ընթացքում. նա կարողանում է հիանալի կերպով նկարագրել: Իսկ
յերբ վոր Փափազյանը աշխատում է տիպեր տալ, տիպերը նրա
մոտ հանդես գնն գալիս այնպես կոնկրետ, համույր, կենդանի կեր-
պով, ինչպես վոր այս շուկայի մեջ իրականության մի շարք տվյալներ:

Որինակ՝ վեպի մեջ «Ալեքսանդր»-ն իբրև կոնկրետ մարդ հանդես
չի բերված, այնպես վոր յերե վորեկն նկարիչ կարգա այս գրվածքը
յեկ ցանկանա նկարել Ալեքսանդրին, թվում է, վոր նա շատ կ'ընկալարանա:

Գրվածքի մեջ Միրզա Ռիզա Սալիբը յեկս չի կենդանագրվում:
Գայով գրվածքի ուղղության խնդրին, պետք է ասենք, վոր այս-
տեղ հատկապես Փափազյանը փրձել է ռեալիզմ գործադրել, բայց
նրանայդ լրիվ չի ազդողվել ռեալիզմի տարրերը քիչ են այս վեպի մեջ.
այդ տարրերը յերեւում են հարեմի նկարագրության մեջ, Այնըն
խանութի յեկ խոսքովի սիրահարության բաժնում. այստեղ յերեւում
է Ռաֆֆու «Հարեմ» վեպիկի ազդեցությունը:

Փափազյանի յերկրորդ պատմական վեպը «Ակրեֆեպա»-ն է.
«Ակրեֆեպա»-ն ընդգրկում է իր մեջ խուլերայի դարաշրջանի
մի եպիպոդ. յերբ վոր Թեհրանի մեջ մեծ ճաչալ է առնում խուլե-
րան. ամուսի մեջ սկսվում է տարածվել մի անհիմն կարծիք.
Թե վոր մուսուլմանները թունավորել են մայրաքաղաքի զրերը՝
հազատապիալներին: Թունավորելու շամար, ի միջի այլոց յեկ մե-
ղագրում են գերբերին-կրակապաշտ մուսուլմաններին յեկ ահա խու-
լանը պարսիկ հոգեվորականների ղեկավարությամբ հարձակվում է
գիբերերի հազաքատեղաւ վրա: Այդ ժամանակ գերբերը, իրենն ա-
ռաջնորդի կամ Սովպետի ներշնչումով, խոստենին Ակրեֆեպա են

հրապարակում յեղ գլուխ ունենալով նրան դուրս են դաշխ անել յեղ
ձակում մուսուլմանների վրա ու նրանց փախչելու:

Փափազյանը խորեվի այս քայլը բացատրում է նրանով, թե
խորեվը զբաղաշատական վարպետությանը մի նոր բացատրություն է
տալիս, նրան դարձնելով կռվի յեղ լույսի մի դրոշ - ասում է ժողովուրդն
պետք է մոտեցնել այս կռվի յեղ լույսի կրոնին: Հեղ համբերատար
վարդապետության / կրակապաշտության / ներկայացուցիչ խորեվը
դառնում է ըմբոստ յեղ պայքարող մի վարդապետության արտաբու-
րիչ:

Ինչ հասարակական գեղարվեստական արժեք ունի այս վեպը:

Մենք ասացինք վերելում, վոր Փափազյանն ասլթակել է, այս
տեղ նա հետևել է այն մտածողներին, վորոնք շատ խոշոր սխալ
նյին գործում կարծելով, վոր հին կրոնը կարելի յե վերածորոգել, և
նրա մեջ նոր բովանդակություն դնել: Այստեղ նկատի չի առնված
այն, ինչ վոր ասել է ԼԵՆԻՆԸ կրոնի մասին, վոր սա մի ուղյակ
է, ինչ հագուստի մեջ ել կրոնը հանդես գա, միևնույնն է՝ նա հա-
կածողովորական է ըստ նյության:

Զրադաշտական, ինչպես և քրիստոնեական թե՛ հին և թե՛
«նոր» լուսաբանությամբ այս կրոնները ներկայացնում են հակաժո-
րովորական և վնասարարական տեսություններ, հենց այս տեսան-
կյունով Փափազյանի մյուս պակասությունն այն է, վոր Փափա-
զյանը շատ է իդեալականացնում կրակապաշտ առաջնորդ Մովսե-
սին: Շատ յերկար նրան ճառել է տալիս և ինչպես յերեվում է
Փափազյանին շատ է դուր գալիս այս կրոնավորի ճառախոսությունը:

Յեթն «Աշխարհ»-ի մեջ հասարակական կանգան յեղ
ներն են, «Ազերբեյջան»-ի հասարակական կանգան գերբնությունն է,
Էրակաաշտությունը, բայց այն տարբերությունը կա, վոր «Աշխարհ»-ի
մեջ Փափազյանը ավելի շատ պաղպղում է յեղ յեղ յեղ կենցաղային

խնդիրներով, իսկ «Աղետօրհան»-ի մեջ Փափազյանը շատ թույլ կերպով
է տալիս գերբերի կենդանու, պատճառ է միայն նրանց կրոնական մի
ձեռք մասին, նկարագրում է նրանց գերեզմանատունը յեղ վերջ:

Միծըրժա մենք պետք է ավելի շատ տեղեկութիւններ իմա-
նանք այս խաւի մասին, վերջերսի մեզ համար համարել լինի այն բա-
նը, թէ ինչպես մոզպետը կրոնական խանութատուութիւն, կրոնական
եքստազ է առաջ բերում այդ խաւի մեջ:

Հենց այս բոլորով էլ պայտանավորված է վեպի գեղարվեստա-
կան արժեքը. Այս իմաստով ամենից խոշոր թերութիւնն այն է գեղար-
վեստական արժեքի տեսակետից, վոր Փափազյանը չի կարողացել հա-
մարել կերպով առլ այն մթնոլորտը, «այն հասարակական, քաղաքական
տրամադրութիւնները, վոր հարող են տեղեկել «Աղետօրհան» - այսինքն
կրոնական մարգարէ: Մի մարդ, վորին կարող են հազարապալները
հեռեկել յեղ իրենց առաջնորդն ընդունել. «Աղետօրհան»-ի առաջ գա-
լու դեպքը համարել չէ: Հենտ պետք է նկատել նախկ այն պահաու-
թիւնը, վոր ունի առ, ինչպես և «Աղետօրհան»-ը, այստեղ էլ հերոսները
չեն դարձել տիպեր, որինակ մոզպետը շատ ավելի հաճոքս է գալիս իր
ձառերով, քան կենդանի մարդ է. վեպի մեջ ավելի շատ արված է նրա
բանախոսութիւնը, քան կենդանի մարդը:

Բայց ի հարկէ այս բոլորով հանդերձ «Աղետօրհան»-ն գե-
ղարվեստական արժեքից գուրկ գործ չէ յեղ սրա գլխավոր պատճառն
այն է, վոր Փափազյանը պատմել գիտէ, նրա վեպը վոր սկսեցիր
պետք է շարունակես մինչեղ վերջը կարողալ, այսինքն Փափազյանը
հետաքրքիր կերպով գիտէ պատմել տեսածը:

Մնաց մի խնդիր ևս պարզել և սրանով վերջացնել «Աղե-
տօրհան» և «Աղետօրհան»-ի մասին մեր առաջ ները: Այդ խնդիրն հե-
տևյալն է - «Աղետօրհան»-ը և «Աղետօրհան» տպագրվել են «Լուսա»
ամսագրում: «Լուսան» միապետական և ռեակցիոն հայ հոգեվարա-

գյուտ քահանա Աղանյանը տպագրեց Փափազյանի այս պատմա-
պետը: Նա տպագրվեց վաղ թե այն բանի համար, վոր «Ալեմգիր»
մեջ Փափազյանը գնում է անգլիական իմպերալիզմի դեմ, վոր թե
այն բանի համար, վոր «Ալեմգիր»-ը վորպես ժողովուրդ-աշխարհակա-
նե կամ «նկերֆեզա»-ն այն բանի համար տպագրվեց, վոր սրա մեջ
շատ խիստ վերաբերմունք կա դեպի պարսկական միապետությունը:
վորտեղ շատ բացասական փաստեր են հանդես բերված Նասրեդդին
շահի վերաբերյալ:

Պետք է հիշել, վոր «Ալեմգիր»-ի մեջ այն դեպքը յերբ
շահը հանդես է գալիս՝ ճանապարհորդվելու ժողովուրդի մեջ, Փափազ-
յանը նկարագրել է թե ինչպես նա իր 30000 շքախմբով անցնում էր
գավառները և իր հետևից բողնում ավիրածություն: Թե ինչպես
նրա գնալուց հետո յերկիրն իրանից ներկայացնում էր այնպիսի պատ-
կեր, ինչպիսին մորեխից հետո սրբված արտը:

Իհարկե «Լուսն» շի տպարան այս պատմագրությունը հիշյալ
դեպքերի համար: Դժբախտաբար Փափազյանը չէր հասկանում չի յնչի
իր հայացքների մեջ և այդ անհետևյալականությունը որոշագործել է
«Լուսն» հանդեսը: Որինակ՝ «Ալեմգիր»-ի մեջ Փափազյանը ավելի
դրական է տալիս պարսիկ հոգեվորականի տրալը, քան Նա կա. և
վերջի վերջո այս ամբողջ վեպի հիմնական գործող անձը հողեվորա-
կանությունն է: Մյուս վեպի, «Ալեմգիր»-ի մեջ Փափազյանը նոր
կրոնի առաջյալ խոսքերին այս կամ այն շափով զարթոյ է կարգա-
յնել տալիս և աշխատում է յերիտասարգունել այդ պատմական կրո-
նական համոզմունքները:

Շատ բնական է, վոր այս տենդենցները կարող էին
արամագրել «Լուսն»-ի իմբագրությունը, վորպեսզի վեպերը տպագրելու
ի հարկե անտեսելով դեմոկրատական ժողովուրդասիրական տենդենցները:

Փափազյանի յերրորդ պատմական գործը «Ասի»-ն է, վորը նշանակում է ապստամբ: Այս վեպի մեջ ապստամբում է պարսկահայ տակ մի ժողովուրդ՝ քախտարի ժողովուրդը, մի լեռնաբնակ ժողովուրդ, վորը հորիսցանի լեռներում ապստամբում է միապետության դեմ:

Փափազյանի «Ասի»-ն մի դրվագ է այս քախտարի ժողովրդի ապստամբության պատմությունից: Այս պատմավեպի համարուտ բովանդակությունը հետևյալն է: Բախտարի ժողովուրդը ապստամբում է նասրեդդին Շահի ժամանակ մի արյունահեղ պայքար է սկսում պարսիկների յեվ միապետության միջեվ յեվ այս պայքարի մեջ վերջի վերջի փոքրաթիվ ժողովուրդը, սպառնալից սվելի հետամնաց տերերկայի տեր ժողովուրդը պարսվում է Շահի վորքի հանդեպ յեվ Շահի վորդին սպանելով քախտարի ցեղի առաջնորդ Հեյդար Ալի խանին, գերի յե վերցնում նրա վորդիներին յեվ բերում Թեհրան, վորպես պատանդ: Յեվ ահա այս «Ասի» պատմավեպը Փափազյանը Հեյդար Ալի խանի վորդիներից մեկին Մեյլի Դուլի խանի դարձի ու անվան պատմությանը: Բախտարական ժողովուրդը կարծում է, վոր իր առաջնորդի վորդին մի որ կփախչի, կ'գա իրենց հայրենիքը յեվ նրա առաջնորդությանը իրենք նորից կ'ապստամբվեն ու կ'ապստամբվեն: Բայց փրանակ քախտարական ժողովրդի այս հույսերն իրագործելու Մեյլի Դուլի խանը դառնում է ռենեգատ-դավաճան: Փոխանակ իր հայրենակիցների հետ ապստամբվելու Շահի դեմ, Շահը քրչե մնում, վոր նրան ուզարկի իր հայրենիքը, վորպես պարսկական պաշտոնյա: Ինչ միջոցներով է կարողանում Շահը հասնել իր նպատակին: Նա ուսյումի, կունանց, ինճուխների միջոցով կարողանում է քայքայել այս լեռնական իրիանի բարոյական կոյովը յեվ ապստամբության հերոսը դառնում է անկման հերոս:

Յեվ ահա այդ ժամանակ այս անկման դեմ կռվում է Մեյլի Դուլի խանի դաստարակ հալեն, վորն ամեն կերպ աշխատում է նրան այս քայքայված դրությունից ապաստել: Մակայն ի վերջո նրա

անկոր կռիվը պարսկական Շահի այս աչքեպետության դեմ ու բոլոր
գործադրած միջոցները ապարդյուն են լինում յե՛վ նա այլատուրում է ու
մահանում առ անուշամբ: Վորքան վոր կալեն վոգեվորվում է Մեյթի Ղուլի
խանին, վոր իր հայրենիքը սպասում է նրան, վոր պետք է պատուելի
դրոշակ բարձրացնել, Մեյթի Ղուլի խանը նրան ասում է, վոր այնքան,
վորքան պարսիկները մի հսոր միապետություն ունեն, վերջինիս դեմ
փոքրաթիվ ուժերով կռվելը կլինի խելագարություն: Վերջի վերջը այս
համոզումը նրա փոխվում է թուլամորթության ու նա դառնում է Շահի
հավատարիմ պաշտոնյաներից մեկը. յե՛վ այս աչքապետության հերոսը դառ-
նում է մի ոպորտունիստ, ուժեղի առաջ խոնհարվելով յե՛վ համակերպվե-
լով: Նա դառնում է Շահի հավատարիմն այն աստիճան, վոր Շահը
ուզում է նրան իբրե՛վ իր մոտ մարդ յե՛վ պարսկական պաշտոնյա ուղար-
կել բախտիարտի ժողովրդի մեջ աշխատելու: Այս ժամանակ է, վոր նրա
մեջ արթնանում է խղճի խայթը, նա մտածում է, թե ինչպես պար-
սիկները սպանեն իրեն հորը, իսկ ինքը վորպես նրանց պաշտոնյա
գնա իր հայրենիքում աշխատի և վճուրմ է ինքնասպանություն գործել:

Վեպի վերջաբանում Փափալյանը այն միտքն է հայտնում, վոր
այս հերոսի մահը դառնում է բախտիական ժողովրդի ապատարբան մահ:

ժողովուրդը չի ապատարբվում յե՛վ դառնում է մի սարուկ ժո-
ղովուրդ յե՛վ ընդունում պարսկական հպատականությունը: Այստեղ Փա-
փալյանը դառնում է հոռետես. ասում է մի քանի տարուց հետո բախտի-
ական ժողովրդի անունը պատմությունից կընջվի: Այս է վեպի բովանդակությունը:

Ինչ հասարակական. յե՛վ գեղարվեստական արժեք ունի այս
պատմավեպը: Հասարակական տեսակետով վեպի հիմնական թեմայից
այն է, վոր այստեղ Փափալյանը հանդես է գալիս վերին աստիճանի
ինդիվիդուալիստական աշխարհայացքով. նրա այն կարծիքը, վոր հերո-
սի մահը - ժողովրդի մահն է, սա արդեն հակադրական տեսակետ է
հակասում է նրա այն կարծիքը, վոր գրել է 1896-97 թվերին իր

գլխայից գրած նամակաշարքում - պատմահայաստանի ինքնավարության
լիտական բնութան մասին: Նա այստեղ այն կարծիքն է հայտնում, վոր
անհատի դերը պատմության մեջ շատ է զերագնահատվում: Փափազյա-
նը այս հորվածների մեջ հարձակվում է նայել հայ պատմագիրների
վրա, վոր նրանք ավելի շատ սքազվել են թագավորների, իշխանների գոր-
ծերը պատմելով յեվ վարագույրի հետեվ են թողել բուն գործողներին՝
ժողովրդին: Այստեղ Փափազյանի աշխարհայայքը այն տեսակետն է ար-
ձարձում, թե պատմություն ստեղծողը ժողովուրդն է և վոր անհա-
տի դերը այստեղ - պայմանական է, իսկ սրան հակառակ, իր «Ասիա»
պատմավեպի մեջ, անհատի դերը դարձնում է վճռական: Տեղ անհա-
տի դերի այս զերագնահատումը «Ասիա» պատմավեպի ընդամենը ամե-
նախադր թերությունը է, այստեղ թերագնահատվում է բախտիական ժող-
ովրդի ազատագրական յեռանդը: Նա գրում է, վոր 50 տարի հետո բախտի-
ական ժողովրդի անունը պատմության մեջ չի լսվի. բայց մեծք տեսնու-
մնք, վոր այս պրոզաներ, այս նախատեսությունը չի ճշտվում:

1907 թվի պարսկական ազատագրական շարժումների մեջ

բախտիարի ժողովուրդը բռնում է առաջին տեղերից մեկը:

Իսկ ինչ զեղարկեստական արժեք ունի «Ասիա»-ան վորպես
պատմավեպ. այստեղ ել ինչպես իր առաջին յերկու պատմավեպերու
Փափազյանն հանդես է գալիս վորպես դեմոկրատ, վորպես ժողովրդա-
սեր յեվ այդ յերկու կոպող ումերի միջեվ, բախտիական յեվ պարսկա-
կան կառավարության միջեվ, նրա համակրանքը ճնշվողների կողմն էր:

Ամեն կերպ նա կողմնակից է ցույց տալիս իրեն պարսկական
ազատագրական շարժումներին, ամեն կերպ աշխատում է ցույց տալ իր
համակրանքը այս փոքրաթիվ ժողովրդի ազատագրական կռիվներին. ա-
յնու վոր այս հիմնական տենդենցը կարճ իր թելի պես անցնում է
Փափազյանի այս վեպի մեջ և պատմավեպը ազիտայիայի տեսա-
տից բնականորեն արժեքավոր գործ է յեվ հնարավորություն է

իս ժողովրդի մեջ, վորպես ազիտացիոն գործ - այս տրամադրութիւնները պարզանալու: Հիմնական տենդենցը, յետե հարկ յենք առնուած գույտը վորոշ արժեք ունի:

Գալով տիպական արվեստին, պետք է ասենք, վոր դժբախտաբար Փափազյանը չի կարողացել Մեյքի Զուլի խանի տխուր տեսնեվողականորեն: Ընթերցողը վեպը վերջացնելուց հետո, Մեյքի Զուլի խանի մասին մի անբողջական հասկացողութիւն չի կարողանում կազմել, և սրա պատճառն այն է, վոր հեղինակի հասարակ Մեյքի Զուլի խանի տխուր միաձուլված և հետեվողական է:

Փափազյանն աշխատում է ապացուցել, վոր Մեյքի Զուլի խանը ոպումի, կանանց, խնջույքների ազդեցութիւն տակ կամայալամայ դառնում է դասալիք: Բայց հենց ինքը, Փափազյանը, վեպի սկզբից ցայց է տալիս, վոր Մեյքի Զուլի խանը հենց այն գլխից էլ ապստամբութեանը կողմնակից չի յերել. ուստի անկման մասին խոսք չի լինել չի կարող: Իսկ ինչո՞ւ նա դեմ է ապստամբութեանը: Վորովհետեւ գտնում է, վոր պարսից միապետութիւնը ունեղ է և մի փոքրաթիւ ժողովրդի այսպիսի ապստամբութիւնը պիտի հաճարել յերեխայութիւն - ապանտորա: Նա ասում է « Գեղք է շահի հետ, պարսիկների հետ, լեզու գտնել և այդ ձևով բարտանան ժողովրդի խնջիրը լուծել »: Ինչե անկման մասին խոսք ևս ուրա և ու անկումը վոր թե Մեյքի Զուլի խանի համար է, այլ կալեյի:

Կալեն խոսում է իր սանի հետ. աշխատում է համոզել նրան, կալեն չի տեսնում, թե իր սանը ինչ հարացքներ ունի դեպի աստուծոյ շուքիւնը:

Այս վեպի ամենամեծ թերութիւնը հենց այն է, վոր հեղինակը Մեյքի Զուլի խանի և կալեյի տեսակետները իրար հետ չփորձում է:

Վերջացես գեղարվեստորեն համոզեցուցիչ չէ, վոր Մեյքի Զուլի խանը ինքնասպանութիւն է գործում: Սա ճիշտ է, յետե կանոն:

Նա՞ն լինե՞նք Լաւելի տեսակետի վրա, բա՛ն ճշմարտ չե՞նք, « վերսնում»
 ենք Մելքի Առաքիլի տանի տեսակետը, վորովհետեւ, ինչպէս սասայինք, նա
 ապստամբութեամբ դեմ է և գտնում է, վոր պարսիկները հետ պետք
 է լեզու գտնել: Մելքի Առաքիլի տանը շատ ավելի հետեւողական կ'մնար,
 յերբ նա ինքնապատմութեամբ վերջ շտար իր կյանքին յեղ ընթերցողութիւն
 համար շատեղծեր մի տարակուսանք: Այս մէկերը Փափազյանը չի կարո-
 ղացել այնպէս քանդել: վոր մի ներդաշնակ բան ստեղծի յեղ ավելի
 մընքնել է ճանապարհին. նույնը պետք է ստել նաև Լաւելի մասին.
 Լաւելն- նրա դաստիարակը ամենից առաջ շատ անհասկանալի կերպով
 ներկա չէ պարսկական պաշտօնում: Մի դաստիարակ, վորը ինչ շինում է
 պարսկական պաշտօնը - նա աշխատում է քանդել պարսկական պաշտօն
 աշխատել և դարձնել է Մելքի Առաքիլի տանին պարսկական որենտացի-
 այի մարդ, սա ուղում է քանդել այդ. այստեղ էլ, ճիշտ նույն բանը տե-
 ղի ունի, ինչ վոր «Ճայռ»-ի մէջ, տանուտերը, վորը քանդում է
 Գրիգոր աղայի գործը - մի աղա, վորի կողմն է կառավարութիւնը,
 վոստիկանութիւնը, բյուրոկրատիան յեղ այսպիսով այդ տանուտեր գոյու-
 թիւնը ավելի շուտ պայմանավորված է Փափազյանի կամքով. նույնը
 յեղ Լաւելի գոյութիւնը. իբրեւ մեկը, վոր պաշտօնի դեմ ուրույնիա
 չէ կազմակերպում, նրա ներկայութիւնը պարսկական պաշտօնում վորչեմէ
 բանով պայմանավորված չէ: Այս իմաստով մենք տեսնում ենք, վոր
 Լաւելն գեղարվեստական գոծի մի ամպստմար է. նա վոր այլ ինչ է,
 յերբ վոր Մելքի Առաքիլի տանի խղճի ձայնը, նրա ներքին ձայնը, վորը
 որչեպտացել է, բայց կենդանի մարդ չի դարձել: Մելքի Առաքիլի տա-
 նի մէջ խոսում է յերկու ձայն - բախտաբան ժողովրդի, իր հոր ձայնը.
 յերկրորդ ձայնը - սա պարսկական պաշտօնի ձայնը, իր քաղաքա-
 կան համոզումների ձայնը, իր ռեալիզմի ձայնը. մի ձայն, վորը զրո-
 նում է, թե վորքան ժողովուրդ ահաւելի պետութեան ունի չի կա-
 ռող պայքարել: Այս տեսակետից Լաւելն ինքնուրույն գոյութիւն

չունի, նա մնում է մի մշտնապատ հոգեբանական պրոբլեմ:

Քաղով վեպի կոմպոզիչիային, պետք է ասենք, վոր Փափազ-
յանը վոր միայն տվել է այն, ինչ վերաբերում է բախտական մո-
ղովորի ապստամբությանը, այլ յեվ միջանկյալ փայմարիվ պատմություններ
է արծ, վորով նպատակ է ունեցել պարզելու պարսկական կյանքի մի
շարք խնդիրները: Խնդիրներ, վորոնք անմիջապես կապված չեն վեպի
հիմնական թեմայի հետ: Փափազյանը մի շարք տեղեկություններ
ունի պարսկական կյանքի վերաբերյալ, վորպիսի տեղեկություններ նա
աշխատում է մտցնել վեպի մեջ: Զեվ բնական է, վոր այս մի շարք
պատմվածքները վեպի կառուցվածքը խճողում են, ծանրաբեռնում
յեվ վեպը տուժում է իր ամբողջության կողմից: Այսպես որինակ՝
հին յեվ նոր պարսիկների վեճը: Մանրամասն նկարագիր պարսկական
մի խնճուղի յեվ այլն: Ինչպես այստեղ, նույնպես յեվ Փափազյանի
մյուս վեպերում, Փափազյանի ուժը նրա պատմելու արվեստի մեջ է:

Փափազյանն խիստպես հետաքրքիր պատմող է նա իր ունեցած տե-
ղեկությունները կարողանում է ընթերցողին տալ, իր հերոսների զրույցի վե-
ճերի ընթացքում: Փափազյանի թերությունն այստեղ, գեղարվեստական
տեսակետով այն է, վոր տիպերի հոգեբանական կարգապետը հետեվողակա-
նությունը կերտումը նրա մտտ ավրվում է, յեվ ընթերցողը փոխանակ մի
համոզում կազմելու այս կամ այն հերոսի մասին - տատանվում է տար-
բեր պատկերացումների միջեվ: այսպես որինակ՝ հենց գլխավոր հերո-
սի՝ Մեյթի Ռուչի խանի, կամ այլ խանի Թավմազ խանի, վորը նույն-
պես բախտական իշխան է. յեկել է պալատ - անձնատուր է յե-
ղել խանին; հպատակություն է հայտնել յեվ դարձել է պարսկա-
կան որձնուայիայի ներկայացուցիչ, այս խանը անհասկանալի պատ-
ճառներով Մեյթի Ռուչի խանին անվանում է դավաճան: Բայց ըն-
թերցողը - դժվար է հասկանում այն դրդապատճառները, վորը ստիպում է
Թավմազ խանին այսպիսի հայտարարություն անելու: Պարզ չէ թե ինչ

առավելություն ունի Թափապ խանը ինքը, վոր իր նման մի ուրիշին
 դատապարտում է. յեվ վերջի վերջո Թափապ իշխանն ել տեսնում ենք,
 վոր վոչ մի առավելություն չունի, համեմատած Մեյթի Ղուլի խանի հետ
 կամ յերես ունի, ապա Փափապյանը շի կարողացել չույստարել յեվ
 մնում է, վոր ընթերցողը կուհուսներ անի: Սա վեպի թերությունն է:
 Նիշենք Նայել այն, վոր Փափապյանը իր բոլոր տիպերին հավա-
 սար ուղարկությանը չի տալիս, վոր առաջ է քաշում վորոչ տիպերի
 յեվ վարագույրի հետեվն է թողնում մշուշի մեջ, մի շարք տիպերի:
 Իսկ մենք գիտենք, վոր լավագույն գրողները հիմնականում գըլ-
 խավոր յեվ յերկրորդական հերոսներ չունեն. լավագույն սողների մոտ
 փոքր տիպերն են դուրս են բերված շատ բնորոշ շատ համուլիշ:
 «Ասի» պատմավեպի գեղարվեստական արժեքի մի կողմն ել
 պետք է համարել այն, վոր հիշեցնում է Փափապյանի արձակ բա-
 նաստեղծության շնորհքը, մի շնորհք, վորը նա արտահայտել է ու-
 թիշ գրվածքներում ևս - որինակ «Կուր դալու»-ի մեջ: Այդ շնորհքը
 արտահայտել է Նայել այստեղ - որինակ՝ շատ գեղարվեստական կերպով
 է տվել Մեյթի Ղուլի խանի յերազները՝ ոպյումի ապրեցություն
 տակ:

IV

Մնաց մի խնդիր յեվս պարզեք դա Փափապյանի կրած
 գրական ապրեցության խնդիրն է:

Վրբանես Փափապյանը իր հրատարակած «Վտակ» ժողովա-
 ծուի մեջ տպագրել է Յուրի Վեսելովսկու մի հոդվածը «Արեվմտա-
 յեվրոպական գրականության ապրեցությունը հայ գրականության վրա»
 խորագրով. այս հոդվածի մեջ Յու. Վեսելովսկին խոսում է Նայել Փա-
 փապյանի կրած գրական ապրեցությունների մասին յեվ ոուս քննադա-
 տը այն կարծիքն է հայտնում, վոր Փափապյանը նկրեյական է. գերմա-
 նացի փիլիսոփա Ֆրիդրիխ Նիշենի աշակերտն է. նա գտնում է, վոր

Փափայանը հայ փոքրաթիվ նիշնականներից մեկն է, վոր նիշնեյի ուսմունքը մասսայականացնում է ժողովրդի մեջ:

Նա ինքը հետեւում է նիշնեյին, ոգտագործում է նրա փոխափայտութիւնը յեւ այդ փոխափայտութիւնը մեղմացրած, բարեփոխած կերպով մասսայականացնում է ժողովրդի մեջ:

Կարծում ենք, վոր այս տեսակետի մի մասը ճիշտ է, մի մասը սխալ: Ճիշտ է այն մասը, վոր իսկապես հայ գրականության մեջ Փափայանը առաջիններից մեկն է յեղել, վոր նիշնեյի մասին գրել է յեւ աշխատել է վորոշ շափով նրա ուսմունքը մասսայականացնել. ճանորայրել է նրա գործերի հետ, սկսել է նույնիսկ նրա գործերիցը այսպես. «Ամալատուտրան» թարգմանել յեւ կիսատ է թողել: Նա հաճախ հիշատակում է նիշնեյի անունը, խոսում է նրա ուսմունքի յեւ նրա գործերի մասին: Ճիշտ է յեւ այն, վոր Փափայանը վորոշ քննադատական վերաբերմունք է ցույց տալիս նիշնեյին: «Մուրճ»-ի մեջ գրված մի հոդվածում / 90-ական թվականների վերջերին / նա գրում է. նիշնեյի ուսմունքը ունի յերկու մաս - քաղաքական քննադատող նիշնեյի կա դրական. Տրագրեր առաջադրող նիշնեյ, յեւ Փափայանը գտնում է, վոր քննադատող նիշնեյ ավելի բարձր է յեւ համակրելի քան այն նիշնեյ, վորը առաջադրում է իր Տրագրերը՝ մարդուն կերպարանափոխելու համար: Այս դրական Տրագրեր առաջադրող նիշնեյ նրա կարծիքով վերին աստիճանի հակակրելի յե. կարծեք սրանով Փափայանն ուզում է ցույց տալ, վոր ինքը ոգտագործել է նիշնեյի քաղաքական կարծիքները յեւ իրոք աշխատում է մի շարք քաղաքական կարծիքներ ոգտագործել: Իսկ ճիշտ չէ Յուրի վետլովսկու մյուս պնդումը, վոր իսկապես Փափայանը պտարյուն նիշնեյական է: Ճիշտ չէ հենց այն տեսակետից, վոր վերջի վերջո նիշնեյ Տաշխատական գաղափարախոս է: Տաշխատական հիտլերական զերմանիան ներկայումս հրատարակում է նիշնեյի գրվածքները վորպես:

Ֆաշիզմի մեծ կշարիկի խոշոր օրրժեր ու ամենուրեք կանգնեցնում է նրա արձանը: Այս նիշընի հետ Փափազյանը հիմնականում վոր մի կապ չունի: Մենք տեսնում ենք, վոր Փափազյանի էյուրթունը, նրա գեղարվեստական արժեքի միջուկը, ժողովրդասիրութունն է, ժողովրդի քաղաքական յեվ սոցիալական պատագրման խնդիրն է. մի խնդիր, վորը ժողովրդի թշնամի Ֆաշիզմը աշխատում է խափանել:

Յեվ իսկապես բոլոր այն դեպքերում, յերբ անզամ գիտակցութեն Փափազյանն աշխատում էր նիշընին այս կամ այն շափով ողտագործել, սա նրան չի հաջողվում. յեվ վորոշ տեղեր կարելի յե ասել, վոր նա մեր գրականության մեջ շամ կոպիտ մտքեր է արտահայտել, վորով թեքվում է դեպի անարխիզմը. որինակ՝ «Ըմբոստ յերգերի» մեջ ասում է թե՛ պարտականութունը այն պիտուն է, վորտեղ եղեր են կապում: Չեստ պետք է նկատի առնել, վոր իսկապես խորապես սրխալվում է գեղագետ Փափազյանը յերբ ցանկանում է մի շարք տիպեր տալ ընդորիմակելով նիշընին - որինակ՝ «Եմմաս»-ի մեջ Սուրենյանը, «Ասպետ»-ի մեջ վարժապետ վահանը յեվ այլն:

Նիշընն, սա իմպերիալիստական գերմանիայի բուրժուապիայի փիլիսոփան է. այն բուրժուապիայի, վոր գերմանական յունկերական ֆեոդալիզմի լծի տակ պաշտպանում էր Շոպեն - Շաուերի պետիսիզմը և յուսում էր համակերպության մասին: Կամք ունենալը, կամեցողութուն ունենալը համարվում է ամոթ բան, իսկ 80-ական թվականներին գերմանական բուրժուապիան սկսեց իր նվաճողական քաղաքականութունը, առաջնորդելով նիշընի գաղափարներով:

Այս նվաճողական քաղաքականութունը գարձավ մի կուլուր պաշտամունք յեվ ժողովրդական բոլոր համոզմունքները համարվում էր թուլամորթութուն: Սոցիալիզմը նրանք համարում էին թուլերի համոզմունք, կարեկցության մոթալ. ասում էին, վոր խիղճը յեվ արդարութունը պետք է յենթարկվի ուժի վարպետությանը.

իրավունքը ուժեղինն է , որեքը պաշտպանում է ուժեղին :

« Զալատուսարա » - յի մեջ խոսում է , վոր ահռելի վիճեք կարելի չե փռել յեվ կործանել թույլերին , վոր գերմարդը ձնվի : Աս գերմանական բուրժուապիայի այն վայրենի վարպետությունն է , վորի մեջ ժողովուրդը , վորպես թնդանոթի միս ծառայեցնում է իր նվաճողական քաղաքականությանը : Բնական է , վոր այս ֆաշիստական նիշնյի յեվ Փափապյանի գրական վաստակը իրար հետ հիմնականում վոշինը շունեն . բայց վերջի վերջո չի կարելի ժխտել այն հանգամանքը , վոր Փափապյանը վորոշ ժամանակ հրապուրվել է նիշնյով , ճիշտ այնպես , ինչպես հրապուրվել է մի ժամանակ և Լեվետիկ Խահայանը : նիշնյից Փափապյանի ստեղծագործության մեջ մնացել է վորոշ ինդիվիդուալիստական աղյարըմբռնում , անհատի դերի գերագնահատում յեվ մասսաների դերի թերազնահատում :

Կրկնում ծնք այս բանը վորոշ շափով գալիս է նիշնյից : Բայց նիշնյականությունը , բացի քաղաքական հասարակական գավանանք լինելուց միաժամանակ յեվ վորոշ գեղարվեստական ուղղություն է :

Նիշնեն նատուրիալիզմի փիլիսոփաներից է . այս կողմից էլ նիշնյի յեվ Փափապյանի միջեվ վոշինը ընդհանուր չկա :

Փափապյանի ռեալիզմը շատ ավելի թեքում ունի դեպի ռոմանտիզմը , քան դեպի նատուրալիզմը : շեռո պետք է նկատի առնել նա յեվ այն հանգամանքը , վոր մի շարք հասարակական - քաղաքական խնդիրներ Փափապյանի մոտ յերբեմն հակասական կերպարանքով են հանդես գալիս : Արի՞մակ՝ Փափապյանի վերաբերմունքը դեպի հոգեվորականությունը . մենք տեսնում ենք նրա այս տատանումը « Եմմա » - յի « Ապրեկեցա » - յի մեջ : Այս տատանումները ցույց են տալիս , վոր Փափապյանն իբրեվ մանր բուրժուական դեմոկրատ գրող , մի շարք իւրեդիրների վերաբերյալ չի կարողացել հաստատուն կողմնվորոշում ունենալ : Այդ տատանումները ցույց են տալիս , մի այլ կողմից ,

Փափայանը հիմնականում իբրև ժողովրդասեր մի գրող, նիշ-
 շեյի ֆաշիստական փիլիսոփայության հետ վորյեվե կապ ու առնչու-
 թյունն չունի: Բայց յեվ այնպես մենք չենք ժխտում, վոր Փափայ-
 անք ուսումնասիրել յեվ վորոշ շափով ցանկացել է որտազործել
 նիշշեյի գեղարվեստական արժեքը: Նիշշեյն ասում է, «Բն յեվ այս
 հեղինակների տարբերությունը այն է, վոր յես աշխատում եմ մի եջի
 վրա արտահայտել այն, ինչ վոր ուրիշ հեղինակներ արտահայտում
 են 10 եջի վրա»:

Վոճի այս սեղմվածությունը, աֆորիզմներով խոսելու սո-
 վորությունը յեվ վերացական մտքերը պատկերավոր արտահայտելը
 մի որինակելի արժեք է Փափայանի համար: Նա սուր է կարճ խո-
 սել, գրել: Արվեստի այս կողմը Փափայանը մի շարք նվեյանների
 մեջ յերեվում է: Նա տալիս է կարճ հակիրճ գրական ժանրի որի-
 նակներ, վորի միջոցով աշխատում է որտազործել նիշշեյի այս
 որինակը մի եջի վրա արտահայտել այն, ինչ վոր ուրիշը արտահայ-
 տում է 10 եջի վրա:

Այսպիսով Յուրի Վեսելովսկու տեսակետին գալով, պետք է
 ասենք, վոր ճիշտ է Փափայանը նիշշեյի աչքեցություն տակ յեղել է,
 Բայց այդ աչքեցությունը նրա վրա խորը չի յեղել: այնպես վոր վեր-
 ջի վերջո նա չի դարձել նիշշեյական յեվ մնացել է ավելի ժողովրդա-
 կան հեղինակ, քան ֆաշիստական փիլիսոփայի աշակերտ:

Փափայանն առհասարակ մեր վարգապաճ գրողներից մեկն
 է յեղել: Նա յեվրոպական լեզուներ գիտեր, ուներ գրական բարձր կր-
 թություն, շատ է ճանապարհորդել, շատ է կարգացել յեվ բնական է,
 վոր նրա գրելակերպի վրա յերեվում է կուլտուրա: Յերթ նա վորյեվե
 ժանր բանեցնում է, այդ ժանրի վրա դուք տեսնում եք այս կամ այն
 ոռա և արեվմտայեվրոպական հեղինակի բարերար աչքեցությունը:
 Բայց դժվար կլիներ Փափայանին կապել վորյեվե հեղինակի յեզակի

աղբեցության հետ: Յերե վերցնե՞ք նրա տաճկահայերի կյանք
 տրված պատմվածքները, դուք այստեղ նկատում եք Ռաֆֆու շունչ
 բայց մե՞նք տեսնում ենք, վոր վերջի վերջո ֆափաղյանն ամբողջ
 պես առօրյան չէ: Յերբ նա իր նովելներն էր գրում, իրական
 կյանքից ունայնատական վոգով, դուք այստեղ նկատում եք Մարտի-
 սանի աղբեցությունը, մասամբ յե՛վ առա նշանավոր նովելիստ Գար-
 ղինի աղբեցությունը - որիմակ՝ « Ըմբոսաի մահը » . յերե վերցնում եք
 ֆափաղյանի գրական խողոր վեպերը, դուք այստեղ տեսնում եք
 առա յե՛վ ֆրանսիական նշանավոր գրողների աղբեցությունը:

« ժայռի » հեղինակը նորվեգիացի դրամատուրգ Իբսենի
 գրական ժառանգության աղբեցության տակ է: Պատմական
 վեպերի մեջ, նա վորոշ շափով աչքով է Ռաֆֆուց, Վիկտոր
 Հյուգոյից, Ծերենցից, Մուրապանից յե՛վ մի շարք այլ հեղինակ-
 ներից: Բայց վերջի վերջո ֆափաղյանն այս բոլոր աղբեցու-
 թյուններով հանդերձ մնում է հայ գրականության մեջ
 իբրև ինքնուրույն մի հեղինակ:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0067590

III
2224

Պետական արտոնական հրատարակչության տպարան, Յերևան
Չափեր N 617, տիրուժ 300